ՀԱՄԱՌՕՏ ՈՒՐՈՒԱԳԻԾ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ (1883-1918ԹԹ.)

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Աշխարհասփիւռ հայկական գաղութները, ինչպէս յայտնի է, ստեղծուել են տարբեր հանգամանքների բերումով ու տարբեր ժամանակներում։

Ռուսաստանի հայկական գաղութները, պատմական պայմանների բերումով, ձեւաւորուեցին այն ժամանակաշրջանում, երբ թուրք-պարսկական ծանր լուծը թօթափելու հայ ժողովրդի ազատագրական ձգտումները կապւում էին Ռուսաստանի օգնութեան հետ։

ԺԸ. դարում Ռուսաստանի հզօր տիրակալները (Պետրոս Ա., Եկատերինա Բ.) ձգտում էին, երկրի հարաւային սահմանները ընդարձակելով, դուրս գալ դէպի արեւելքի չուկաները։ Այդ նպատակով արտօնութիւններ էին տալիս այն օտարերկրացիներին, ովքեր գալիս բնակութիւն էին հաստատում երկրի հարաւի գրեթէ անմարդաբնակ տափաստաններում։ Նրանք յատկապէս ուշադիր էին հայերի եւ վրացիների նկատմամբ, որոնք, իրենց ազատագրական շահերից ելնելով, համակիր էին Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերին։

Օգտուելով ռուսական կառավարութեան ընձեռած հնարաւորութիւններից՝ հայերն հաստատուեցին եւ իրենց համայնքները ստեղծեցին Աստրախանում, Մոսկուայում, Հիւսիսային Կովկասում, Պետերբուրգում, Նոր Նախիջեւանում, Գրիգորիոպոլում։ Ղրիմի թերակղզին, ուր վաղուց հայկական համայնքներ կային, 1783ին միացուեց Ռուսաստանին։

Հայկական գաղութները, յանձինս մագիստրատների կամ ռաթհաուզների, ունեցան իրենց ինքնավարութիւնը մարմնաւորող հաստատութիւնները։ Նրանք ստացան նաեւ տնտեսական ազատ գործունէութեան իրաւունք եւ ազգային լեզուն ու դաւանանքը պահպանելու իրաւասութիւն։

Մոսկուայի եւ Պետերբուրգի վիթխարի քաղաքների հայ համայնքների բնակչութիւնն այնքան սակաւաթիւ էր, որ յատուկ ուշադրութեան չարժանացան եւ ինքնավարութիւն չստացան։ Այդուհանդերձ, նոյն քաղաքում բնակուող թէկուզեւ շատ փոքրաքանակ հայերին ազգային ոգով համախմբուելու համար անհրաժեշտ էր ունենալ համայնքային ինչ-որ մարմին։ Եկեղեցին էր մնում տեղի հայերին համախմբող եւ հայրենիքի հետ կապող միակ կազմակերպութիւնը։

Ռուսական մայրաքաղաքներում եկեղեցիների կառուցումը, երկու հայկական համայնքների եւ առհասարակ ռուսահայ գաղութների կեանքը մեծապէս կապւում են Լազարեանների անուան հետ։

Նոր Ջուղայից Մոսկուա տեղափոխուած Աղազար Լազարեանի աւագ որդին՝ Յովհաննէսը, 1758ին տեղափոխուեց Պետերբուրգ։ Նա կարճ ժամանակում մտերմական յարաբերութիւններ ստեղծեց պետութեան բարձրաստիճան պաշտօնեաների հետ եւ օգտագործեց այդ կապերը ի շահ հայ հասարակութեան, ի շահ ազգային խնդիրների լուծման։ Նա դիմեց կառավարութեանը՝ եկեղեցիներ կառուցելու թոյլտուութեան խնդրանքով։ Եկեղեցու եւ յարակից շինութիւնների համար 1770ին քաղաքի կենտրոնական մասում՝ Նեւսկի Պողոտայում, հողամաս յատկացուեց։ Շուտով՝ 1770ականների վերջում կառուցուեց Ս. Կատարինէ եկեղեցին, իսկ 1791ին հայկական գերերդմանատանը՝ Ս. Յարութիւն եկեղեցին։

Յովհաննէս Լազարեանը Ս. Կատարինէ եկեղեցու երկու կողմերի դատարկ տարածութիւններում կառուցեց հինգ յարկանի երկու քարէ շէնք եւ նուիրաբերեց եկեղեցուն։ Այդ շէնքերը եկամուտի մեծ աղբիւր էին եկեղեցիների համար։

1804 Յուլիսի 19ին բարձրագոյն իշխանութիւնների հրամանագրով եկեղեցիների ամբողջ կառավարումը դրուեց Լազարեանների կողմից ղեկավարուող եւ հայ հասարակութեան կողմից ընտրուած հոգաբարձութեան վրայ[1]։

Այսպիսով, հոգաբարձութիւնը, փաստօրէն, դարձաւ ոչ միայն եկեղեցիները, այլ նաեւ հայ համայնքը միաւորող ղեկավար կազմակերպութիւն։ Նոյնը կատարուեց նաեւ Մոսկուայում։

Հոգաբարձութիւնը Լազարեանների գլխաւորութեամբ բաւականաչափ երկար ժամանակ՝ մինչեւ ԺԹ. դարի 80ականները, տնօրինում էր հայկական համայնքների գործերը։

Ինչպէս յայտնի է, հայ մանուկներին կրթութիւն տալու նպատակով Յովհաննէս Լազարեանի կտակի հիման վրայ 1815ին Մոսկուայում բացուեց Լազարեան ճեմարանը։ Կարճ ժամանակում յատուկ նպատակով բացուած եւ լաւ կազմաւորուած նոր ուսումնարանը ճանաչում գտաւ եւ դարձաւ երկրի նշանաւոր ուսումնական հաստատութիւններից մէկը։

Սակայն ժամանակի ընթացքում Լազարեան ճեմարանում առաջացաւ այնպիսի իրավիճակ, երբ մշտական եկամուտները չէին բաւարարում ուսումնարանի օրէցօր աճող ծախսերը։ Պակասող գումարը մշտապէս լրացնում էին Լազարեանները իրենց անձնական միջոցներից։ Այդ պարագան, ինչպէս եւ ըստ Ռուսաստանում հայ եկեղեցու կարգավիճակը կարգաւորող կանոնակարգի՝ «Պոլժենիէ»ի՝ թեմերում թեմական դպրոցներ հիմնելու համար գրագէտ հոգեւորականներ ունենալու անհրաժեշտութիւնը հրատապ լուծում էին պահանջում։

Հանգուցաւորուած այդ հիմնահարցերը լուծելու խելամիտ առաջարկ արեց Լազարեան տոհմի միւս երեւելի ներկայացուցիչ, Յովհաննէս Լազարեանի եղբօր որդին՝ Խաչատուր Լազարեանը[2]։ Նա առաջարկեց մայրաքա-

դաքների հինգ եկեղեցիները (Պետերբուրգի Ս. Յարութիւն եւ Ս. Կատարինէ, Մոսկուայի Ս. Խաչ, Ս. Աստուածածին եւ Ս. Յարութիւն) միաւորել Լազարեան Ճեմարանի հետ եւ ստեղծել տնտեսական մէկ ընդհանուր վարչութիւն, որտեղ մէկի տնտեսական միջոցների պակասը կը լրացուի միւսի կողմից։ Յիրաւի, Պետերբուրգի եկեղեցիները եկամուտների մեծ յաւելում էին ունենում, ինչը չէր կարելի ասել Մոսկուայի եկեղեցիների մասին։ Դրանից բացի՝ առաջարկւում էր գրագէտ հոգեւորականներ պատրաստելու համար Լազարեան Ճեմարանում բացել հոգեւոր բաժին։

1841ին Նիկոլայ Ա. ցարի հաւանութեանն են արժանանում այդ բարեփոխումները։ Դրանք կեանքի են կոչւում եւ երկար ժամանակ մնում անփոփոխ։

1871ին մահանում է Լազարեան տոհմի վերջին ներկայացուցիչը՝ Խաչատուր Լազարեանը։ Վերջինս ունէր երկու դուստր եւ նշանաւոր փեսաներ, որոնց կտակել էր իր ժառանգութիւնը։ Նրանցից մէկը Յովհաննէս Դելիանովն էր (Դալլաքեան), որը, 1881ից սկսած, երկար տարիներ Ռուսաստանի Լուսաւորութեան նախարարն էր եւ, հաւանաբար, հակուած չէր Լազարեան գերդաստանի շարունակողը դառնալու։ Միւս փեսան նոյնպէս ազնուականի տիտղոս ունեցող մեծահարուստ Սիմէոն Աբամելիքն էր։ Նա միաւորեց երկու նշանաւոր գերդաստանները, որն այդուհետ անուանուեց Աբամելիք-Լազարեան։

Այդ ժամանակ Լազարեան Ճեմարանն անցել էր Լուսաւորութեան Նախարարութեան ենթակայութեան, փակուել էր հոգեւոր բաժինը, փաստօրէն չէր գործում հոգաբարձութիւնը։

Երկու հայ համայնքների ներկայացուցիչները քանիցս հարց էին բարձրացնում հայ եկեղեցիների հաւաքական ղեկավարութիւնը վերականգնելու եւ Աբամելիք-Լազարեանին հոգաբարձու նշանակելու վերաբերեալ։ Նրանք մտորում էին, որ կարող են կորցնել Ճեմարանը՝ որպէս ազգային կրթօջախ, ինչպէս նաեւ եկեղեցիների տնտեսական կարողութիւնները ազգային նպատակներով օգտագործելու իրաւասութիւնները։

Ի վերջոյ, կառավարութիւնն անդրադարձաւ եւ հիմնաւոր լուծում տուեց այդ հարցին։

1883 Նոյեմբերի 18ին նախարարների կոմիտէն յատուկ որոշում ընդունեց Մոսկուայի եւ Պետերբուրգի հայկական եկեղեցիների ունեցուածքը տնօրինելու մասին[3]։

Երկու հայ համայնքներում ստեղծւում են 6 հոգուց բաղկացած եկեղեցական խորհուրդներ, որոնց անդամները 3 տարի ժամկէտով իրենց միջից ընտրում են ծխականները։

Եկեղեցական խորհուրդների նախագահ է դառնում Սիմէոն Աբամելիք-Լազարեանը՝ ժառանգաբար։ Յանձնարարւում է հոգաբարձուին եւ թեմական առաջնորդին կազմել խորհուրդների եւ եկեղեցիների հետ կապուած բոլոր գործառնութիւնների կանոնակարգ։

Աբամելիք-Լազարեանը եւ Նոր Նախիջեւանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը ստանձնում են այդ պատասխանատու

յանձնարարութիւնը։ Հիմք ընդունելով կառավարական որոշումը եւ խորհրդակցելով Ներքին Գործերի Նախարարութեան այլադաւանների բաժանմունքի հետ՝ նրանք մշակում են մայրաքաղաքների երկու եկեղեցական խորհուրդների եւ դրանց միաւորող միասնական խորհրդի եւ առհասարակ երկու համայնքների հոգեւոր կեանքի հետ կապուած բոլոր հարցերի յատուկ կանոնակարգ։

Պետերբուրգի եւ Մոսկուայի եկեղեցիները թէպէտեւ առանձին խորհուրդներ ունէին, սակայն դրանց մէկ ընդհանուր խորհրդի մէջ միաւորելը լիովին արդարացուած էր։ Այդ՝ Եկեղեցական Խորհուրդ միաւորումով ստեղծւում էր մեծածաւալ խնդիրներ լուծող հզօր կազմակերպութիւն։ Դրանից բացի՝ երկու քաղաքների հոգեւոր կազմակերպութիւնները միանալով փոխադարձաբար աջակցում, լրացնում էին մէկը միւսին։

Մայրաքաղաքների խորհուրդները եւ միացեալ խորհուրդները թէպէտեւ հոգեւոր կազմակերպութիւններ էին եւ ունէին զուտ կրօնական անուանում, սակայն ըստ էութեան աշխարհիկ հաստատութիւններ էին։ Աւելի ստոյգ, դրանք միաւորում էին հոգեւորն ու աշխարհիկը՝ վերջինիս որոշակի գերակշռութեամբ[4]։ Խորհուրդների կառուցուածքը հենց այդ էր թելադրում։ Դրանք գլխաւորում էին աշխարհիկ անձնաւորութիւններ, յատկապէս նշանաւոր մտաւորականներ։ Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի կազմում տարբեր ժամանակներում ընդգրկուած են եղել Մկրտիչ Սանասարեանը, Կարապետ Եզեանը, Քերովբէ Պատկանեանը, Ս. Յարութիւնեանը, Վ. Վարդանեանը, Նիկողայոս Ադոնցը, Գրիգոր Տիգրանովը, Գ. Սուլթանշահը, Գասպար Եաղուբեանը եւ շատ ուրիշ անուանի դէմքեր։

Մոսկուայի եկեղեցական խորհրդի կազմում աշխատել են Ստեփան Մամիկոնեանը, Գրիգոր Խալաթեանցը, Մակար Բարխուդարեանը, Ա. Յովհաննիսեանը, Զարեհ Մսերեանցը, Մ. Քանանեանը, Ս. Զարգարեանը եւ շատ ուրիշներ։

Եկեղեցական խորհուրդները պարբերաբար գումարում էին տարեկան 20-25 նիստ, քննարկում տարբեր բնոյթի բազմազան հարցեր։

*

Համառօտակի անդրադառնանք եկեղեցական խորհուրդների համազգային ուղղուածութիւն ունեցող գործունէութեանը։

Եկեղեցական խորհուրդները իրենց միջոցները գործածում էին առաջին հերթին քաղաքական ալեկոծումների ժամանակ անմխիթար վիճակում յայտնուած արեւմտահայերին օգնելու համար։

Ինչպէս յայտնի է, Օսմանեան Կայսրութիւնը ԺԹ. դարի 90ականների կէսերին կազմակերպեց խաղաղ հայ բնակչութեան կոտորած։ Այդ բարբարոսութեանը զոհ դարձան 300000 հայեր, իսկ տարբեր երկրներում հանգրուանած տասնեակ հազարաւոր հայ փախստականներ գտնւում էին անմխիթար վիճակում՝ ընչազուրկ, անօթեւան, սովի մատնուած։ Գաղթականութեանը պատսպարելու լայն շարժում սկսուեց հայ իրականութեան մէջ։ Դրան աշխուժօրէն մասնակցեցին նաեւ Ռուսաստանի մայրաքաղաքների հայ համայնքները։

Պետերբուրգի եկեղեցական խուրհուրդը, տեղեկանալով փախստականների դժուարին կացութեանը, 3000 ռուբլի է յատկացնում Երեւանում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Իգդիրում գտնուող գաղթականներին, իսկ 1000 ռուբլի՝ Սալմաստում ապաստան գտած հայերին[5]:

Մոսկուայի եւ Պետերբուրգի Եկեղեցական Միացեալ Խորհուրդը, Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդի միջոցով տեղեկանալով Ռուսաստանում հանգրուանած փախստականների վիճակին, նրանց յատկացնում է 2000 ռուբլի՝ հագուստ գնելու, եւ 1000 ռուբլի՝ այլ կարիքների համար[6]:

Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդը 1900ին 5000 ռուբլի է ուղարկում Կ.Պոլսի պատրիարքին՝ որբանոցներ հիմնելու համար։ Պատրիարքն իր գոհունակութիւնն է յայտնում եւ վստահեցնում գումարն իր նպատակին ծառայեցնելու հարցում։

Յաջորդ տարի պատրիարք Մաղաքիա Օրմանեանը հոգաբարձու Ս. Աբամելիք-Լազարեանին տեղեկացնում է գումարը ստանալու եւ գործադրելու մասին։ Նա յայտնում է, որ Մշոյ Ս. Առաքելոց վանքում 54, Ս. Կարապետ վանքում 20 երեխաների համար որբանոց է ստեղծուել, գաւառների 34 գիւղերում դպրոցներ են բացուել, եւ աւելացնում է. «Որբերը նախնական ուսում մը կ'ընդունին: Բայց Ս. Առաքելոց որբանոցի մէջ կայ նաեւ արհեստութեան մ'ալ եւ Այնթապէն բերուած վարպետ մը տղայոց կ'ուսուցանէ ի մասնաւորի տարազագործութեան արհեստը, որ եթէ տարածուի Մշոյ մէջ՝ այս ընդարձակ երկրին ժողովուրդը պիտի կրնայ իր հագուստին համար պէտք եղած կերպասը գտնել, զոր դուրսէն գնել ստիպուած է հիմա եւ առեւտուրի աղբիւր մ'ալ ունենալ: Իսկ դպրոցներու մէջ երկու հազար տղաք ամփոփուած են եւ նախնական ուսում մը կ'ընդունին, փրկուելով Ձեր շնորհիւ թափառաշրջիկ կեանքէ մը, որու պիտի մատնուէին, ենթարկուելով բազմաթիւ փորձութեանց...»[7]:

Օրմանեան պատրիարքը 1903 Դեկտեմբերին Աբամելիք-Լազարեանին տեղեկացնում է երեք տարում ստացուած 15000 ռուբլի գումարը գործածելու մանրամասները։

Վերջում պատրիարքը խնդրում է շուտափոյթ ուղարկել որբանոցների, դպրոցների, արհեստանոցների չորրորդ տարուայ նպաստները, որպէսզի ճմռան եղանակին հնարաւոր լինի շարունակել դրանց գործունէութիւնը[8]:

Առաւել ծանր ու դժուարին կացութիւն ստեղծուեց Առաջին Աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի կառավարութեան կազմակերպած ցեղասպանութեան հետեւանքով, որին զոհ դարձաւ մէկուկէս միլիոն հայ։ Արեւելեան Հայաստանը լցուեց տուն ու տեղից զրկուած, սովի ու համաճարակային հիւանդութիւնների մատնուած հայ գաղթականներով, որբերով։

Հայ իրականութեան մէջ յայտնի էին վերոյիշեալ մայրաքաղաքների եկեղեցական խորհուրդների բարեգործական աշխուժութիւնը եւ բաւարար դրամական միջոցներ ունենալը։ Եւ զարմանալի չէ, որ բազում տեղերից, այդ թւում նաեւ կաթողիկոս Գէորգ Ե.ը, դիմումներ յղեցին եկեղեցական

խորհուրդներին։ Կաթողիկոսը 25000 ռուբլի էր խնդրում գաղթականների առաջին անհրաժեշտութեան պահանջները բաւարարելու համար։

«Անհնարին է,- *գրում է Վեհափառը,*- առանց արտասուաց նայիլ ի վերայ սոսկալի տառապանաց զաւակացս եւ տեսանել զգաղթական կանայս, զծերս եւ զանմեղ մանկունս, յուսահատ կացութիւն որոց յուզէ զմիտս եւ զսիրտս ամենեցուն»[9]։

Նիկողայոս Ադոնցը Էջմիածնից հեռագրում է Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդին եւ յայտնում, որ շատ գաղթականների պատսպարել են շրջակայ գիւղերում, բայց 30000 հոգի մնացել է աննկարագրելի ծանր դրութեան մէջ։ Նա պահանջում է կազմակերպել օգնութիւն եւ անյապաղ դիմել վճռական ու կտրուկ միջոցների՝ փրկելու դրութիւնը[10]։

Պետրոգրադի Եկեղեցական Խորհուրդը անյապաղ 10000 ռուբլի է յատկացնում գաղթականների հոգսերն ամոքելու համար։ Ապա 150000 ռուբլի գումար է առանձնացնում, որից 50000ը դնում է փախստականների հարցերով զբաղուող կազմակերպութեան՝ Թիֆլիսի Կենտրոնական Բիւրոյի տրամադրութեան տակ՝ գաղթականներին օգնելու նպատակով, իսկ 100000ը յատկացնում է դեղօրայք, սնունդ մատակարարող եւ արդիւնաւէտ գործող կազմակերպութիւններին[11]։

Պատերազմի հենց սկզբում եկեղեցական խորհուրդների գործունէութեանը զուգահեռ եւ նրանց հետ համագործակցած երկու հայկական համայնքներում կազմակերպւում են պատերազմի ժամանակ տուժածներին օգնութիւն կազմակերպող կոմիտէներ։

Մոսկուայի կոմիտէն 1916-1918ին հրատարակեց Armianskii Vestnik (Հայկական լրաբեր) հանդէսը, որի փաստական խմբագիրը հայազգի նշանաւոր արուեստաբան, հրապարակախօս ուսուցչապետ Ալեքսէյ Ջիւելեգովն էր։ Պարբերականի հրապարակ գալը նա պայմանաւորում է ռուս հասարակայնութեանը հայ ժողովրդի պատմութեանն ու մշակոյթին, պատերազմի հետեւանքով նրա համար ստեղծուած ողբերգական ու դժուարին կացութեանը ծանօթացնելով։

Գաղթականներին օգնող բազմաթիւ ու բազմաբնոյթ կազմակերպութիւններ կային, որոնց ոչ-ներդաշնակ, չհամաձայնեցուած ու չհամադրուած գործունէութիւնը խառնաշփոթ իրավիճակ էր ստեղծում։ Նրանց խնդիրները համակողմանի քննարկելու եւ համակարգելու նպատակով երկու հայկական համայնքները նախաձեռնեցին հրաւիրել համագումար։ Գաղթականների իրավիճակին քաջատեղեակ ժամանակի նշանաւոր գործիչները խիստ անհրաժեշտ էին համարում նման համագումարը։ Ջիւելեգովը նշում էր, որ Ռուսաստանում տեղական եւ ազգային բազմաթիւ կազմակերպութիւններ կան, որոնցից մէկը փող ունի, բայց փորձ չունի, միւսը փորձ ունի, փող չունի, ուրիշներն այլ առաւելութիւններ ու պակասութիւններ ունեն։ Նրանք դժգոհում, բանավիճում են իրար հետ, որից, սակայն, գաղթականների վիճակը չի թեթեւանում[12]։

Ահա թէ ինչու Մոսկուայի եւ Պետերբուրգի հայկական համայնքների կոմիտէների նախաձեռնութեամբ Պետրոգրադում 1916 Մայիսի 10-12ին

հրաւիրւում է փախստականների հարցերով զբաղուող կազմակերպութիւնների համագումար։

Այդտեղ գաղթականների հետ կապուած բոլոր խնդիրները քննարկւում են կազմակերպական, դպրոցական, նիւթատնտեսական, բժշկաառողջապահական, գիւղատնտեսական, իրաւական եւ ընդհանուր հարցերի մասնաճիւղերում եւ կանխածրագրում յետագայ անելիքները[13]։

Հասարակայնութեան ընդհանուր կարծիքն է արտայայտում Ջիւելեգովը, երբ բարձր է գնահատում համագումարի նշանակութիւնը։ Նա գտնում է, որ համագումարը գաղթականների հետ տարուող աշխատանքները համակարգել, միաւորել է մէկ միասնական կենտրոնի մէջ։ Ռուս հասարակայնութիւնը տեղեակ դարձաւ այն աննկարագրելի ողբերգութեանը, որը կրել էր հայ ժողովուրդը Օսմանեան Կայսրութիւնում, նաեւ այն իրողութեանը, թէ Ռուսաստանում գաղթականները ինչպիսի թշուառ վիճակում են։ Ջիւելեգովը յոյժ կարեւորում էր նաեւ այն, որ համագումարը ռուսական հասարակական մտքին նիւթ տուեց Հայկական Հարցի մասին։ Համագումարում բոլորը մտածում էին ընդհանուր գործի մասին եւ գրեթէ չեն հնչել հայ իրականութեան մէջ այնքան սուր արտայայտուող կուսակցական տարակարծութիւններ։ Մեծանուն գործիչը վստահութիւն էր յայտնում, որ ստեղծուած համերաշխութիւնը չարունակական կը լինի, քանի որ դա է պահանջում Հայաստանի շահը[14]։

Ռուսաստանում ապաստան գտած արեւմտահայ գաղթականները ձգտում էին հոգալ իրենց առօրեայ ապրուստը, պատրաստում էին կենցաղային եւ արուեստի բազմատեսակ իրեր։ Գաղթականների Օգնութեան Համառուսական Կոմիտէն Տատիանա Նիկոլաեւնայի գլխաւորութեամբ որոշում է Պետրոգրադում կազմակերպել տարբեր ժողովուրդների գաղթականների ձեռային աշխատանքի ցուցահանդէս։ Նա քաղաքի Հայկական Կոմիտէին առաջարկում է իր վրայ վերցնել ցուցահանդէսի հայկական բաժնի կազմակերպումը։

1917 Ապրիլին բացւում է ցուցահանդէսը, որի հայկական բաժնում ներկայացուած էին կանանց տպաւորիչ ձեռագործ, հագուստեղէն, կօշկեղէն, դարբինների, զամբիւղագործների աշխատանքներ, ուսումնական ձեռնարկներ, արուեստի ստեղծագործութիւններ։ Ցուցահանդէսը ռուս հասարակայնութեանը ըստ կարելւոյն ներկայացրել էր արեւմտահայութեան ժողովրդական մշակոյթը, վարքն ու բարքը։ Ցուցահանդէսը միաժամանակ վկայութիւն էր, որ գաղթականները դժուարին կացութեան մէջ ամէն ինչ անում են իրենց կեանքն ապահովելու համար։ Ցուցահանդէսը նաեւ ապացոյց էր, որ իրական չէին տարածուած այն լուրերը, թէ գաղթականները ձեռնածալ նստած, յոյսերը կապում են միայն դրսից եկող օգնութեան[15]։

Մայրաքաղաքների եկեղեցական խորհուրդներն օգնութեան էին հասել անկանխատեսելի երեւոյթների, բնական աղէտների ժամանակ եւս։ 1881ին Արեւմտեան Հայաստանում երաշտի հետեւանքով գիւղատնտեսութիւնը յայտնւում է ճգնաժամային վիճակում։

Ալեքսանդր Բ. ցարը, հաւանաբար Միքայէլ Լորիս-Մելիքովից տեղեկանալով սովի մասին, պատրիարքին ուղարկում է պատկառելի գումար եւ թոյլատրում հանգանակութիւն կատարել։ Մոսկուայի հայ համայնքը հանգանակում է 4243 ռուբլի եւ ուղարկում Արեւմտեան Հայաստան[16]։ *Յատկանշական է, որ նուիրատուութեանը մասնակցում են նաեւ օտարազգիներ, անգամ՝ ուսանողներ։*

1899ի *երկրաշարժը Ախալքալաքի ամբողջ գաւառում մեծ աւերածութիւններ կատարեց։ Մոսկուայի հայկական համայնքը* 2900 *ռուբլի եւ Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդը հապշտապ* 1000 *ռուբլի են ուղարկում երկրաշարժից տուժածներին*[17]։ *Նոյնպէս Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդը օգնութեան ձեռք է մեկնում Էրզրումում, Շամախիում երկրաշարժից, Զէյթունում հրդեհից, Ագուլիսում ջրհեղեղից տուժածներին։*

*

Եկեղեցական խորհուրդներն աւելի մեծածաւալ գործունէութիւն էին իրականացնում ուսումնակրթական մարզում։

Հասարակական ծանրակշիռ արժէք էր ձեռք բերում եւ աւելի ծաւալուն ու ընդգրկուն էին Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի օգնութիւնը եւ ներդրումը Հայաստանում եւ հայաբնակ վայրերում գործող հայկական դպրոցներին։ Ուսումնական գործին աջակցելն իրականացւում էր բազում ձեւերով, ներառեալ՝ դպրոցներ բացելով կամ վերանորոգելով, մանկավարժներով ապահովելով, ձեռնարկներ ու դասագրքեր հրատարակելով։

Այս ոլորտում նրանց ընդհանուր գործունէութիւնը երկու հիմնական ուղղութեամբ էր ընթանում։ Առաջինը, որը համեմատաբար սահմանափակ ընդգրկում ունէր, Հայաստանից եւ հայաբնակ վայրերից, առաջին հերթին հայկական գաւառներից, ուսման ձգտող պատանիներին Լազարեան ճեմարանում կրթութիւն ստանալուն սատարելն էր։

Դիմումներից երեւում է բնակչութեան ընկերային դժուարին կացութիւնը եւ համատարած անգրագիտութիւնը։ Օրինակ՝ 1911*ին Վահան Տէր-Առաքելեանը խնդրում է* 13 *տարեկան Արշաւիր Բունիաթեանին ճեմարան ընդունել որպէս ձրիավարժ աշակերտի։ Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդին ուղղած իր խնդրանքը նա հիմնաւորում է հետեւեալ կերպ.* «Նախ, մտքի բացարձակ խաւարն ու տգիտութիւնն է թագաւորում իմ հայրենի Շարուր-Դարալագեազ գաւառում, որի աղքատիկ Բաշքեանդ գիւղում ներկայումս ապրում է յիշեալ երեխայի դժբախտ հայրը։ Վիճակագրութեամբ կարելի է ապացուցել, որ այդ գաւառի 24 հազար հայերից չկայ մինչեւ անգամ 8-10 մարդ, որ ստացած լինի գէթ միջնակարգ դպրոցի կրթութիւն։ Եւ այդ այն պատճառով, որ գաւառում, բացի պետական երկու դպրոցից, չկան տարրական այլ ուսումնարաններ, իսկ դրսում զաւակներին պահելու, ուսուցանելու մասին երազել անգամ չի կարող գարի հացի կարօտ դարալագեազցին, որ իւր ողորմելի գոյութիւնը քարշ տալու համար ստիպուած է օրուգիշեր կռիւ մղել անողոք տարերքի եւ քարքարոտ ու անբերրի բնութեան հետ»[18]։

Ճեմարանի տնօրինությունը յատուկ հոգ էր տանում, որ Հայաստանի տարբեր գաւառներից, կրթական խաւարի մէջ ընկղմած գիւղերից մանուկները հասնեն Մոսկուա, սովորեն, կրթուեն։ 1887ին Ռուսաստանի Ժողովրդական Լուսաւորութեան Նախարարութեան հրամանով փակուեցին բոլոր գիմնազիաների նախապատրաստական բաժինները։ Եթէ այդ հրամանը կիրառուէր նաեւ Ճեմարանի նկատմամբ, նշանակում է պատրաստուածութիւն չունեցող, ռուսաց լեզու չիմացող գաւառներից եկող պատանիները կը զրկուէին կրթութիւն ստանալու հնարաւորութիւններից։ Լազարեանների աշխոյժ միջամտութեամբ այդ հրամանագիրը չկիրառուեց միայն Լազարեան Ճեմարանի նկատմամբ[19]։

Եկեղեցական Խորհուրդը Գէորգեան Ճեմարանում «Լազարեան սաներ» էր պահում։ Ճեմարանի տեսուչ Բագրատ վարդապետը 1909ին Եկեղեցական Խորհուրդ է ուղարկում Լազարեան 30 սաների ցուցակը եւ խնդրում ուղարկել նրանց համար նախատեսուած 6000 ռուբլին։ Յաջորդ տարի Լազարեան սաների թիւը հասնում էր 40ի։ Այդ առթիւ տեսուչը խնդրում է ուղարկել 40 սաների 8000 ռուբլի թոշակը[20]։

Ուսման նկատմամբ աւանդական մեծ սէր ունեցող հայ ժողովրդի երիտասարդները ջանում էին կրթութիւն ստանալ, բայց նրանց մեծ մասը տարբեր վայրերից եկած չքաւոր ընտանիքների զաւակներ էին։ Նրանցից շատերն ուսումը շարունակելու հնարաւորութիւն չունէին։ Երիտասարդական տարիներին Պետերբուրգում եղած ժամանակի մասին Ղազարոս Աղայեանը գրում է. «Ձնայած իմ նեղ վիճակին, ինձանից աւել եւս նեղացած (միջոցներից զուրկ - Վ.Բ.) ուսանողներ կային, դրանք էլ ինձ էին դիմում օգնութեան, տնտեսական թշուառութիւնը մի սովորական երեւոյթ էր մեզ համար, չէինք յուսահատւում»[21]։

Աւանդութիւն էր դարձել չքաւոր ուսանողներին օգնելու համար տարին մէկ անգամ ուսանողական ներկայացումներ, երեկոյթներ կազմակերպելը։ Նման միջոցառումներից գոյանում էր 700-1000 ռուբլի, որը բաւարարում էր ուսանողների շատ փոքր մասի սոսկ անհրաժեշտ կարիքները։

Ուսանողութեան համար ուսումը շարունակելու հնարաւորութիւն ստեղծելու հիմնական ծանրութիւնը իրենց վրայ էին վերցնում եկեղեցական խորհուրդները։ Հարիւրաւոր դիմումներից բերենք որոշ օրինակներ։ Բժշկական Ինստիտուտից Վարսենիկ Աբրահամեանը Պետերբուրգի Եկեղեցու Խորհրդին խնդրում է իրեն թոշակ նշանակել, որպէսզի կարողանայ ուսումը շարունակել։ Նոյն խնդրանքով դիմում է համալսարանի ուսանող Բաղդասար Աւագեանը։ Նիկողայոս Ադոնցը նոյնպէս դիմել է մագիստրոսական ուսման հնարաւորութիւն ստանալու խնդրանքով։ Հաւանաբար Խորհուրդը ցանկացել է տեղեկանալ նրա յետագայ ծրագրերին։ Նա բացատրութիւն է տուել, որ չի կարող որոշակի բան ասել իր ապագայ ծրագրերի մասին, բացի դրանից, որ իր նպատակն է ծառայել հայագիտութեանը, մի ասպարէզ, որը տանում է ամէն տեղ, բացի փառասիրութիւնից[22]։

Եկեղեցական խորհուրդներին յղուող դիմումների ու միջնորդութիւնների քանակն այնքան մեծ էր, որ դժուար էր լինում ճիշտ ու արդարացի բաշխում կատարել։ Պետերբուրգից Հ. Մեղնիկեանը, դրուատելով Եկեղեցական Խորհրդի կողմից չքաւոր ուսանողներին տարեկան 3000 ռուբլի յատկացնելու պարագան, հարց է բարձրացնում թոշակ նշանակելու եղանակը վերափոխելու մասին։ Նա առաջարկում է Խորհրդի կողմից ստեղծել յանձնախումբ եւ բոլոր դիմումները յանձնել նրան, իսկ վերջինս հանգամանօրէն պիտի ծանօթանայ գործերին, կազմի եւ Խորհրդին ներկայացնի առաւել կարիքաւոր ուսանողների ցուցակը[23]։

Կրթութեան հարցով եկեղեցական խորհուրդների հետ աւելի ընդարձակ ծրագրերով յարաբերւում էին բազմաթիւ հասարակական կազմակերպութիւններ։ Դրանց մէջ առանձնանում էին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը (ԿՀԲԸ) եւ Բաքուի Հայոց Կուլտուրական Միութիւնը (ԲՀԿՄ)։

Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդը 1908ին, ընդառաջելով ԿՀԲԸ նախագահ Ս. Յարութիւնեանի խնդրանքին, 12000 ռուբլի է յատկացնում Կովկասի հայաբնակ շրջանների դպրոցներին։ Առանձին գումար է յատկացնում Թուրքիայից տեղափոխուող պանդուխտների համար եւ խնդրում արդիւնքների մասին տեղեակ պահել։ Ընդառաջելով ԿՀԲԸ խնդրանքին՝ 1915ին բացառութեան կարգով յատկացնում է 3000 ռուբլի[24]։

ԲՀԿՄի աշխատանքները մեծ եռանդով ու նուիրումով գլխաւորում էր պետական-քաղաքական գործիչ Ալեքսանդր Խատիսեանի եղբայր Կոստանդին Խատիսեանը։ Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդն ամէն տարի ԲՀԿՄին յատկացնում էր որոշակի գումար։ Մխական դպրոցների համար 1909ին ուղարկում է 2650 ռուբլի, իսկ յաջորդ տարուայ միայն չորս ամիսների համար՝ նոյնչափ գումար, 1911 տարուայ առաջին կէսի համար՝ 4000 ռուբլի։ Միութեան բժշկական մասնաճիւղը Ղարաբաղում հիւանդանոց կառուցելու համար հայցում եւ ստանում է 1000 ռուբլի եւն.[25]։

*

Եկեղեցական խորհուրդների, մասնաւորապէս Պետերբուրգի Խորհրդի կրթական-լուսաւորական գործունէութեան համազգային բնոյթը լաւագոյնս դրսեւորուեց Արեւմտեան Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքով։ Խորհուրդը երկու տարի (1908 եւ 1909) 3000ական ռուբլի է ուղարկում Կ.Պոլսի պատրիարքին՝ 1000ական ռուբլի յատկացնելու Աղթամարի, Ս. Կարապետի եւ Վարագայ Վանքի վարժարաններին։ Վարագայ Վանքի վանահայրը, ընդառաջելով ուսման կարօտեալներին, ընդունում է եւս 15 աշակերտ։ Ապա, վստահ լինելով օժանդակութեան վրայ, Խորհրդի առաջ նոր խնդիր է դնում։ «Ուրախութեամբ կը յայտարարենք պատ[ուական] Հոգաբարձութեանդ,- գրում է նա,- թէ վարժարանիս գոյութեան յիսնամեակը լրացած լինելով, առաջիկայ Յունիսին պիտի տօնուի իր յոբելեանական տօնը համաձայն համակիրներու բուռն ցանկութեան։ Յոյս ունինք որ, այս գեղեցիկ առիթով պիտի յաջողինք վարժարանիս հնացած շէնքը իր յարակից մասերով (դպրոց, ննջարան, ճաշարան, հիւանդանոց,

թատերասրահ, գրադ.-ընթերցարան) վերանորոգել եւ ընդարձակել (որը կարօտ է առ առաւել 800 օսմ[անեան] լիրայի (մօտ 7000 ռուբ[լիի] չափ գումարի մը) եւ վարժարանիս պիտճէն ընդարձակել եւ բարձրացնել ա-նոր տնտեսական-ուսումնական վիճակը, բանալով գիւղատնտեսական կուրսեր, որու պէտքը խիստ կարեւոր է մանաւանդ, որ Վարագայ Վանքը իւր հողերով յարմարութիւններ կը ներկայացնէ»[26]։

Վանի Երամեան Վարժարանը պարբերաբար օգնութիւն էր սպասում։ Վարժարանի տնօրէնը 1912ին խնդրում է ուղարկել տարուայ նպաստը եւ ստանում է 1000 ռուբլի[27]։

Էրզրումի Սանասարեան վարժարանի տեսուչ Գէորգ Աբուլեանը Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդից օգնութիւն է հայցում՝ դրուատելով ուսումնարանի արդիւնաւէտ գործունէութիւնը։ Ի դէպ, այդ ուսումնարանի հիմնադրումը եւս կապւում է Պետերբուրգի հայ համայնքի հետ։ Համայնքի ճանաչուած դէմքերից Մկրտիչ Սանասարեանը 1881ին, երբ Կարինում մոլեգնում էր սովը, իր միջոցներով հիմնադրում է ուսումնարանը։ Եկեղեցական Խորհուրդը, Կ.Պոլսի հայոց պատրիարքի միջոցով ծանօթանալով իրավիճակին, 4000 ռուբլի է տրամադրում Սանասարեան, Վանի Կեդրոնական, Մուշի եւ Բիթլիսի ուսումնարաններին 1000ական ռուբլի յատկացնելու համար[28]։

Տարբեր բնակավայրերից ու հաստատութիւններից դիմում-խնդրանքներն այնքան մեծաթիւ ու տարաբնոյթ էին, որ հնարաւոր չէր բոլորին բաւարարել, մանաւանդ որ Խորհուրդը ստոյգ իրազեկ չէր տեղերում տիրող իրավիճակին։ Խնդիրը կարգաւորելու նպատակով Խորհուրդը նպատակայարմար է գտնում օգնութիւն կազմակերպելու աշխատանքներն իրականացնել միայն Կ.Պոլսի պատրիարքի միջոցով։

Արեւելեան Հայաստանում եւս Եկեղեցական Խորհրդի կողմից կատարուող օգնութիւնն անկազմակերպ վիճակից հանելու եւ արդիւնաւէտ գործելու առաջարկներ են կատարւում։ Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի աշխոյժ անդամ Նիկողայոս Ադոնցն առաջարկում է կրթութեան հարցում առաջնութիւնը տալ գիւղական շրջաններին։ Նա Արեւելեան Հայաստանում առանձնացնում է օգնութեան կարօտ 15 գաւառ՝ Վարանդան, Դիզակը, Խաչենը, Զանգեզուրը, Սիսիանը, Կապանը, Գողթնը, Նախիջեւանը, Ապարանը, Դարալագեազը, Շարուրը, Գէօքչայը, Շորագեալը, Լոռին, Փամբակը։ Նա առաջարկում է դրանցից իւրաքանչիւրում բացել եւ պահպանել մէկ բարեկարգ դպրոց, որը դառնայ լուսաւորութեան կենտրոն ամբողջ գաւառի համար։

Նա առաջարկում էր այնպիսի կենտրոններ ստեղծել, որ մտաւոր ուժերին քաղաքից քաշեն դէպի գիւղ։ Դասագրքերից եւ տնտեսական ծախսերից բացի՝ տարեկան յատկացնել 600 ռ. գումար, որպէսզի դրանք ի զօրու լինեն ծառայելու իրենց նպատակին[29]։

Անուանի պատմաբանի զեկուցագրում նշուած նկատառումները հիմնաւորուած էին եւ հաւանութեան արժանացան, սակայն իրենց հիմնական մասով չիրականացան Առաջին Աշխարհամարտի սկսուելու պատճառով։

Մինչեւ Եկեղեցական Խորհրդի երեւան գալը, եկեղեցական հոգաբարձութիւնը լայնօրէն զբաղւում էր գիտակրթական հարցերով։ Լազարեան Ճեմարանը դարձել էր ե՛ւ կրթական ե՛ւ գիտական ճանաչուած կենտրոն։ Յայտնի է Մկրտիչ Էմինի, Քերովբէ Պատկանեանի եւ ուրիշների գիտական լուրջ ներդրումը այնտեղ։ Խաչատուր Լազարեանի յանձնարարութեամբ պատմաբան Սերգէյ Գլինկան արժէքաւոր աշխատութիւններ գրեց հայոց պատմութեան եւ հայ-ռուսական յարաբերութիւնների մասին։

Լազարեանը գիտական կապեր էր պահպանում Ֆրանսիացի հայագէտներ Վիկտոր Լանգլուայի, Էդուարդ Դիւլորիէի եւ այլոց հետ։

Եկեղեցական խորհուրդների ստեղծումից յետոյ ԺԹ. դ. վերջ-Ի. դ. սկզբներին գիտութեան նկատմամբ հետաքրքրութիւնն աւելի զօրեղացաւ։

Քերովբէ Պատկանեանի աշակերտներից Նիկողայոս Մառը (1864-1934) նոր փուլ բացեց արեւելագիտութեան, հայագիտութեան բնագաւառում։ Նա սերտ կապերի մէջ էր Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի հետ՝ ինչպէս երիտասարդ մասնագէտներ պատրաստելու, այնպէս էլ գիտական հետազօտութիւններ կատարելու հարցերում։ Այսպէս, 1902ին նա դիմում է Եկեղեցական Խորհրդին եւ տեղեկացնում, որ Նոր Ջուղայում գտնուող հայկական ձեռագրերը կորստեան վտանգի տակ են։ Առաջարկում է հոգալ 4-5 ամսուայ գործուղման ծախսերը եւ իր ուսանող Սմբատ Տէր-Աւետիսեանին ուղարկել այնտեղ՝ ձեռագրերը նկարագրելու։ Չորս ամիս անց գործուղուած ուսանողն արդէն Եկեղեցական Խորհրդին զեկուցում է Նոր Ջուղայի եկեղեցիներում, անհատ անձանց եւ գիւղերում եղած 581 ձեռագրեր նկարագրելու մասին[30]։ Երկու տարի անց Մառը կրկին դիմում է Խորհրդին եւ խնդրում հնարաւորութիւն ստեղծել, որ նոյն Տէր-Աւետիսեանը համալսարանն աւարտելուց յետոյ մէկ տարի մնայ Պետերբուրգում՝ Ղազախի վիմական արձանագրութիւնները հաւաքելու, Նոր Ջուղայի ձեռագրերի նկարագրութիւնը հրատարակելու եւ Անիի պեղումներին մասնակցելու համար։ Ուսուցչապետի առաջարկին Խորհուրդն ընդառաջում է[31]։

Մեծ էր հետաքրքրութիւնը մասնաւորապէս միջնադարեան Հայաստանի մայրաքաղաք Անիի ուսումնասիրութեան, նրա հնագիտական պեղումների նկատմամբ։ 1905ին Մառը գրում է, որ Կայսերական Հնագիտական Յանձնաժողովին Անի քաղաքի պեղումների մասին իր տուած զեկուցագրից Եկեղեցական Խորհրդին յայտնի է դարձել այդ փաստը, եւ խորապէս ըմբռնելով դրա նշանակութիւնը՝ Խորհուրդը մեծ գումար՝ 2000 ռուբլի է յատկացրել պեղումները շարունակելու համար։ Ինքը խորապէս շոյուած է Խորհրդի վստահութիւնից, ինչը համարում է հայ հասարակութեան թէկուզ մի հատուածի կարծիքի արտայայտութիւն։ Նա գտնում է, որ անյետաձգելի անհրաժեշտութիւն է Անիում պարբերաբար պեղումներ կազմակերպելը։ Այդ պարագայում «Անի քաղաքը,- գրում է Մառը,- կը ստանայ հսկայական ոչ միայն գիտատեսական նշանակութիւն բանասիրական, հնագիտական տարբեր գիտաճիւղերի համար, այլեւ գիտալուսաւորական գործնական նշանակութիւն անմիջականօրէն հայ ժողովրդի եւ հեռեւաբար հայոց եկեղեցու համար, քանի որ հայոց եկեղեցին ժողովրդա-

ազգային է, եւ ինչը որ կարեւոր է հայ ժողովրդի համար, կարեւոր է նաեւ նրա համար»[32]։

Պրոֆեսորը միաժամանակ իր գոհունակութիւն է յայտնում Խորհրդին՝ ճարտարապետ Թորոս Թորամանեանին նիւթական օգնութիւն ցոյց տալու համար, որը մասնագիտական ստոյգ չափագրութիւններ ու լուսանկարումներ է կատարում։

Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի նախագահ Պրոֆ. Վարդան Վարդանեանը 1906ին Մառին յայտնում է, որ պեղումները շարունակելու համար ընթացիկ տարում եւս արշաւախմբին յատկացւում է 2000 ռուբլի գումար, եւ շնորհակալութիւն յայտնում Եկեղեցու Խորհրդի նիստում կարդացած զեկուցման համար։ Արշաւանքի պետը պեղումների մասին պարբերաբար զեկուցում է Խորհրդին։ Նոյն տարուայ Նոյեմբերին նա Խորհրդին յայտնում է Անիի Գագկաշէն տաճարը պեղելու համար լրացուցիչ 700 ռուբլի յատկացումը ստանալու եւ աշխատանքներն աւարտելուց յետոյ Խորհրդին զեկուցելու մասին[33]։

Եկեղեցական Խորհուրդը, արշաւախմբի պետի զեկուցումներից համոզուելով, որ աշխատանքներն արդիւնաւէտ են ընթանում, աւելացնում է պեղումներին յատկացուող գումարը։ 1911ին պեղումների համար տրւում է 3500 ռուբլի, իսկ տնտեսական այլ ծախսերի համար՝ 500 ռուբլի։ Յաջորդ տարիներին արշաւախմբին մշտապէս յատկացւում է աւելացրած 3500 ռուբլու չափով։ Անգամ Ա. Աշխարհամարտի տարիներին՝ Եկեղեցական Խորհրդի համար ստեղծուած դրամական դժուարին ժամանակներում, պեղումներին յատկացուող 3500 ռուբլի գումարը թողնւում է անփոփոխ։

Անի քաղաքի հնագիտական ուսումնասիրութեան նկատմամբ Եկեղեցական Խորհրդի դիրքորոշումն ընդհանուր հաւանութեան է արժանանում։ Այն յատուկ գնահատութեան է արժանացել անգամ Պետերբուրգի Կայսերական Ակադեմիայի կողմից։ Ակադեմիայի նախագահ Կոստանդին Ռոմանովը 1913 Հոկտեմբերի 11ին յատուկ գրութիւններով Ակադեմիայի եւ անձամբ իր անունից երախտագիտութիւն է յայտնում Եկեղեցական Խորհրդին՝ Ակադեմիայի կողմից գործուղուած ակադեմիկոս Մառի գլխաւորած Անի քաղաքի պեղումներին տարիներ շարունակ առատաձեռն օգնութիւն ցոյց տալու համար[34]։

1913ին *Եկեղեցական Խորհուրդը յատուկ գրութեամբ Մառին տեղեկացնում է թէ նկատի առնելով նրա վիթխարի վաստակը հայ բանասիրութեան ու հայ եկեղեցու պատմութեան ուսումնասիրման ասպարէզում, Պետերբուրգի Համալսարանի Արեւելեան Բաժնում հիմնել է Մառի անուան կրթաթոշակ՝ 600 ռուբլի գումարի չափով։ Խորհուրդը միաժամանակ յայտնում է, որ այդ տարի կրթաթոշակը տրւում է նոյն բաժնի հայ-վրացական բաժնի ուսանող Վահան Տէր-Գրիգորեանին (Վահան Տէրեանին)։*

Տեղեկանալով, որ Խորհուրդն առանց նախորդ տարուայ պեղումների մասին զեկուցումը լսելու նիւթապէս օժանդակել է 16րդ արշաւախմբին (1917 թ.), Մառն իր գոհունակութիւնն է յայտնում եւ ներկայացնում Անիի հնութիւնների թանգարանի 1916ի գործունէութեան արդիւնքները։ Նա

նշում է, որ գիտական մասի ուրուագծումն ի յայտ է բերում հետաքրքիր կանխատեսումներ՝ բնութագրելու արեւելաքրիստոնէական, մասնաւորապէս հայկական արուեստը։ Այդ տարի արշաւախումբը գործել է Կայսերական Ակադեմիայի կողմից յատկացուած 5000, Եկեղեցական Խորհրդի յատկացրած 3500 եւ քաղաքացի Աֆրիկեանի կողմից տրուած 1000 ռուբլի գումարներով[35]։

Յաջորդ տարի Խորհրդի կողմից նոյնչափ գումարով արշաւախմբին աջակցելու առիթով Մառն իր խորին շնորհակալութիւնն է յայտնում դժուարին ժամանակներում հետեւողականօրէն գիտամշակութային այդ ձեռնարկմանը աջակցելու համար։ Եւ դա այն պարագայում, նշում է նա, երբ դեռեւս մտաւոր լայն շրջաններում եւ իշխանութեան ոլորտներում շատ քչերն են կարողանում խորապէս ըմբռնել պեղումների նշանակութիւնը[36]։

*

Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի աջակցութեանն էին դիմում տարաբնոյթ մեծ ու փոքր խնդիրներով բազմաթիւ անհատներ, կազմակերպութիւններ։ Այդ հարցերը համակողմանիօրէն քննարկւում էին Խորհրդի նիստերում, բայց դրական ընթացք էին ստանում յոյսեր ներշնչող անհատների եւ հասարակական արժէք ներկայացնող հայցողների գործերը։

Յիշատակենք մի քանի փաստ։ Ազգագրական Հանդէսի խմբագիր Երուանդ Լալայեանը 1891ին ներկայացնում է հայկական հինգ գաւառների ազգագրական նիւթերն իր կողմից հաւաքելու եւ տպագրելու պարագան եւ խնդրում 3000 ռուբլի գումար յետագայ աշխատանքների համար։ Խորհուրդը դժուարանում է կողմնորոշուել, ուստի դիմում է բանիմաց մասնագէտներից Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանին։ Վերջինս ըստ ամենայնի ներկայացնում է Լալայեանի անցած գիտամանկավարժական ուղին եւ նրա ձեռնարկած գործը, եւ միանշանակ նրան ընդառաջելու հիմնաւորուած կարծիք է յայտնում[37]։ Եկեղեցական Խորհուրդը, յենուելով ստացած յոյժ դրական կարծիքի վրայ, Ազգագրական Հանդէսի տպագրութեան համար յատկացնում է 3000 ռուբլի՝ պատրաստի վեց հատորները տպագրելու համար[38]։

Պատերազմի ժամանակ՝ 1915ին, Լալայեանը Խորհրդին տեղեկացնում է իր գիտական ծրագրերին՝ Վանի եւ Մուշի ազգագրական նիւթերը հաւաքելու, ձեռագրերը նկարագրելու մասին։ Ապա խնդրում է միջոցներ յատկացնել Ազգագրական Հանդէսի 26րդ գիրքը տպագրելու համար։ «Յուսալով, որ մեծարգոյ Խորհուրդը որպէս իմ միակ մեկենասը,- գրում է նա,- չի թողնիլ ինձ իղձերիս կատարման կէս ճանապարհին, ես մերժեցի ինձ առաջարկուած Թիֆլիսի Կովկասեան Թանգարանի վերատեսչի օգնականի պաշտօնը, որ յետոյ յանձնեցին Սմբատ Տէր-Աւետիսեանին»[39]։ Այդ հարցը եւս դրական ընթացք է ստանում։

Եկեղեցական Խորհուրդն առնչուել եւ իր նպաստն է բերել նաեւ հայագիտական մէկ այլ արժէքաւոր աշխատութեան՝ Գիւտ քահանայ Աղանեանցի Դիւան Հայոց Պատմութեան բազմահատորեակի հրատարակութեանը։ Մայրաքաղաքների հայկական եկեղեցիների հոգաբարձու Ս. Աբամելիք-Լա-

գարեանը Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդին յայտնում է, որ Վեհափառ Հայրապետը իրեն խնդրել է դիմել Խորհրդին, որ միջոցներ գտնի եւ իրականացնի Դիւանի 5րդ հատորի հրատարակութիւնը։ Յաջորդ տարի հոգաբարձուն Խորհրդին տեղեկացնում է, որ Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդը շատ բարձր է գնահատում Աղանեանցի աշխատութիւնը, որի 5րդ հատորը նուիրուած է Յովհաննէս Լազարեանի մահուան 100ամեակին։ Նա խնդրում է Խորհրդին քննարկել այդ հարցը եւ հնարաւորութիւն ստեղծել յատկացնելու 1000 ռուբլի գումար, իսկ Դիւանի հրատարակուած հատորներից 50ական օրինակ ձեռք բերելու հարցը կարող են քննարկել հեղինակի հետ[40]։

Տարիներ անց Աղանեանցը գոհունակութիւն յայտնելով 5րդ հատորի տպագրութեան համար եւ յաւելելով, որ 8րդ հատորը լոյս է տեսել ԲՀԿՄի Խորհրդի նպաստով, նշում է, որ իր մօտ պատրաստ են մինչեւ 15րդ հատորները, եւ խնդրում է հոգալ հատորներից մէկի հրատարակութեան ծախսերը։ Խորհուրդը հարցին դրական լուծում է տալիս եւ գումար է փոխանցում նաեւ նախորդ հատորների հրատարակութիւններից օրինակներ ստանալու համար[41]։

Այսպիսով, Մոսկուայի եւ Պետրբուրգի հայկական համայնքները՝ յանձինս իրենց ինքնավարութիւնը մարմնաւորող եկեղեցական խորհուրդների, բազում ուղղութիւններով համազգային նշանակութեան խնդիրներ են իրականացրել մինչեւ 1918։ Նրանք ազգային շահերի բարձր գիտակցութեամբ ջանքեր են գործադրել իրենց միջոցներն ուղղելու մայր հայրենիքում այնքան անհրաժեշտ ուսումնակրթական գործի բարելաւմանը, լուսաւորութիւն տարածելուն, առհասարակ մշակոյթի զարգացմանը։ Անուրանալի է նրանց նշանակութիւնը մշակութային ազգային աւանդները պահպանելու եւ զարգացնելու գործում։ Ռուսական մայրաքաղաքների ոչ-մեծաթիւ համայնքները արձագանգել, օգնել են հայրենակիցներին, բնական աղէտների, քաղաքական վայրիվերումների ժամանակ եւ ուրիշ պարագաներում ստեղծուած դժուարին իրավիճակներում։

Աշխարհասփիւռ հայկական միւս գաղութները եւս մշտապէս ձգտել են օգտակար լինել հայրենիքին ու հայրենակիցներին։ Սակայն նրանց աջակցութիւնը կատարուել է առանձին կարեւոր դէպքերում. շարունակական, պարբերական բնոյթ չի կրել։ Հայկական այդ գաղութների գործունէութեան ամբողջ առանցքը կազմել են ներհամայնքային հարցերը։

Մոսկուայի եւ Պետերբուրգի համայնքների պարագայում հակառակն է կատարուել։ Ներհամայնքային գործերը երկրորդական են եղել եւ աննշան չափերով զբաղեցրել. նրանց համար հիմնական ու մշտական են եղել համազգային խնդիրները, որոնց լուծման համար, ինչպէս նկատեցինք, ծանրակշիռ ներդրում են կատարել։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Մաշտոցեան Մատենադարան, Պատկանեանների Արխիւ, թղթ. 145, վաւ. 358, թ. 7-8։

[2] *Խ. Լազարեանի մասին տե՛ս մեր՝ «Խաչատուր Լազարեւի Կեանքի Համառօտ Ուրուագիծը* (1789-1871)» *յօդուածում՝ Պատմաբանասիրական Հանդէս*, 2010, *թիւ* 2, *էջ* 3-15։
[3] *Ռուսական Պետական Պատմական Արխիւ*, *ֆ*. 821, *ց*. 7, *գ*. 7, *թ*. 197-210։
[4] *Դ. Անանեան, Ռուսահայերի Հասարակական Զարգացումը (1870-1900), Հատ. 2, Էջմիածին, Տպարան Գիտական Ինստիտուտի*, 1922, *էջ* 120։
[5] «*Այլ եւ Այլք*», *Արաքս*, 1897, *էջ* 165-166։
[6] *Հայաստանի Ազգային Արխիւ*, (*ՀԱԱ*), *ֆ*. 399, *ց*.1, *գ*. 970, *թ*. 2։
[7] *Նոյն*, *գ*. 989, *թ*. 12։
[8] *Նոյն*, *թ*. 23-24։
[9] *Նոյն*, *գ*.1077, *թ*. 42։
[10] *Նոյն*, *թ*.77-78։
[11] *Նոյն*, *թ*. 89, 91։
[12] Aleksey Jivelegov, "Armyanskiy S'ezd" (*Հայկական համագումարը*), *Armyanskii Vestnik*, 1916, թիւ 23:
[13] "Vozstanovlenie Armenii. Armyanskiy S'ezd" (*Հայաստանի վերականգնումը։ Հայկական Համագումարը*), *Armyanskii Vestnik*, 1916, *թիւ* 16, *էջ* 11-12։
[14] "Vozstanovlenie Armenii", 1916, *թիւ* 17, *էջ* 1-2։
[15] *Ա. Յարութիւնեան*, «*Պետրոգրադի* 1917*թ. Հայ Գաղթականների Յուցահանդէսը*», *Արուեստ*, 1990, *թիւ* 4, *էջ* 54-55։
[16] *Մշակ*, 1881, *թիւ* 17, 18։
[17] *ՀԱԱ*, *ֆ*. 399, *ց*. 1, *գ*. 987, *թ*.1։
[18] *Նոյն*, *գ*. 1057, *թ*. 49։
[19] *Մշակ*, 1887, *թիւ* 98։ *Շատ հաւանական է, որ այդ հարցում միջամտած լինի Լուսաւորութեան երկարամեայ Նախարար Յովհաննէս Դելեանովը*։
[20] *ՀԱԱ*, *ֆ*. 399, *ց*. 1, *գ*. 1044, *թ*. 19։
[21] *Ղազարոս Աղայեան, Երկերի Ժողովածու, Հատ. 3, Երեւան, Հայաստան*, 1974, *էջ* 369։
[22] *ՀԱԱ*, *ֆ*. 399, *ց*. 1, *գ*. 166, 167, 173։
[23] *Մշակ*, 1895, *թ*. 5։
[24] *ՀԱԱ*, *ֆ*. 399, *ց*. 1, *գ*. 1045, *թ*. 1, 3, 21։
[25] *Նոյն*, *թ*.112, 114։
[26] *Նոյն*, *գ*. 1037, *թ*. 43։
[27] *Նոյն*, *թ*.112,114։
[28] *Նոյն*, *թ*. 6-7, 58-62։
[29] *Նոյն*, *թ*. 5-7։
[30] *Նոյն*, *գ*. 179, *թ*. 6, 7, 11։
[31] *Նոյն*, *թ*. 21։
[32] *Նոյն*, *գ*. 1018, *թ*. 5։
[33] *Նոյն*, *թ*. 15, 16։
[34] *Նոյն*, *թ*. 18։
[35] *Նոյն*, *թ*. 55-56։
[36] *Նոյն*, *թ*. 35. *Կատարուած պեղումների արդիւնքները նա ամփոփեց Անի աշխատութիւնում* (N. Ya. Marr, *Ani: Knijnaya Istoriya Goroda I Raskopki Na Meste Gorodnitsa* (*Անի. քաղաքի գրքային պատմութիւնը եւ պեղումները քաղաքի վայրում*), *Մոսկուա-Լենինգրադ*, 1934)։
[37] *ՀԱԱ*, *ֆ*. 399, *ց*. 1, *գ*. 1001, *թ*. 3։
[38] *Նոյն*, *թ*. 10։
[39] *Նոյն*, *թ*. 75-76։
[40] *Նոյն*, *գ*. 1100, *թ*. 1, 4։
[41] *Նոյն*, *թ*. 10, 23։

A BRIEF OVERVIEW OF THE MOSCOW AND ST. PETERSBURG ARMENIAN COMMUNITY CHURCH COUNCIL ACTIVITIES

(Summary)

VLADIMIR BARKHUDARIAN

The Armenian communities in Russia came into existence during the second half of the 18th century, when the liberation of the Armenians under Turko-Persian rule was linked to Russian support. These communities were granted broad trade and economic rights and, thanks to the magistrates, they had their internal autonomy.

The size of the Armenian communities in Moscow and St. Petersburg was so small that they were not granted communal autnomy. Accordingly, they develeoped their community life through Church Boards and eventually Church Councils. The Church Councils, which included renowned Armenian figures of the Russian capitals, were very productive. These Councils, which embodied the internal autonomy of the communities and were headed by the famous Lazarian dynasty, dealt with both intra-communal and pan-Armenian issues.

Specifically, the St. Petersburg Church Council, with its large financial capability, facilitated the preservation of Armenain cultural and scientific heritage and enabled the publication of various important scholarly Armenological books. Besides this, it inaugurated educational institutions and schools, provided educators and textbooks to schools, and for several years financed the excavations in Ani. The Church Council helped and gave shelter to refugees and orphans that fell victim to Turkish persecution and violence.